ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
17.09.2024թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/8 գնման պայմանագրի

ք. Երևան «26» 03 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Աստիճան» ՍՊԸ-ն, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Հ. Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշումը և ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Աղբերքի Շատջրեքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման համար Կողմերի միջև 17.09.2024թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/8 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Աստիճան» ՍՊԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Գայի փողոց
կառավարական տուն 3	շենք 14 բն. 45
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 11500580197801
Հ/Հ 900011047900	ՀՎՀՀ 09802201
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղարի	Տնօրեն՝
պարտականությունները կատարող՝	
_____ Կ. Անտոնյան	_____ Հ. Անդրեասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
17.09.2024թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/8 գնման պայմանագրի
«26» 03 2026թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2025թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	71351540/30	ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Աղբերքի Շատջրեքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	11 596 300	-	-	1 200 000	3 500 000	3 500 000	3 500 000	5 403 700	5 403 700	5 403 700	5 403 700	5 403 700	5 403 700	**5 403 700**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047900
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Կ. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Աստիճան» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Գայի փողոց
շենք 14 բն. 45
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11500580197801
ՀՎՀՀ 09802201

Տնօրեն՝

_____ Հ. Ասրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

BANK AMIO

N 1803-02

«24» 03 2026

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/8 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/8 ծածկագրով պայմանագրի թիվ 2 համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2.Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 658,000 (վեց հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3.Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4.Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5.Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/8 ծածկագրով կնքվելիք պայմանագրի թիվ 2 համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետի օրվան հաջորդող հինսուներորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 30.06.2028 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ a.manucharyan@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10.Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11.Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ և ՓՄՁ բիզնեսի կենտրոնի ղեկավար՝ Ա. Պետրոսյան

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48

«AMIO BANK» CJSC
48 Nalbandyan Str., Yerevan, 0010, Armenia

ЗАО «АМИО БАНК»
РА, 0010, г. Ереван, Налбандян 48

+374 10 59 20 20
www.amiobank.am

BANK AMIO

N 1802-02

«24» 03 2026

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/8 ծածկագրով պայմանագրի թիվ 2 համաձայնագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2.Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 439,000 (չորս հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/8 ծածկագրով կնքվելիք պայմանագրի թիվ 2 համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 30.06.2028 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ a.manucharyan@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6.Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10.Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11.Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը կենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ և ՓՄՁ բիզնեսի կենտրոնի ղեկավար՝ Ա. Պետրոսյան

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48

«AMIO BANK» CJSC
48 Nalbandyan Str., Yerevan, 0010, Armenia

ЗАО «АМИО БАНК»
РА, 0010, г. Ереван, Налбандян 48

+374 10 59 20 20
www.amiobank.am

Armenuhi Manucharyan

From: AMIO BANK <info@amiobank.am>
Sent: Wednesday, March 25, 2026 9:35 AM
To: a.manucharyan@minurban.am
Subject: ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24-8 թիվ 2 համաձայնագիր
Attachments: 1803-02 երաշխիքի նամակ.pdf; 1802-02 երաշխիքի նամակ.pdf

Հարգելի գործընկերներ,

Տեղեկացնում եմ Ձեզ որ ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ կողմից 24.03.2026թ. թիվ 1802-02 և 1803-02 ելից համարներով թողարկվել են սույն նամակին կից թողարկված երաշխիքները:

Հարգանքով՝

Կարեն Սարգսյան
Գլխավոր մասնագետ
Բիզնեսի զարգացման դեպարտամենտ
Կորպորատիվ և ՓՄՁ բիզնեսի կենտրոնի
Կորպորատիվ բիզնեսի վերլուծության և սպասարկման ծառայություն
Հեռ: +374 10 59 20 20 (00 297)
Բջջ: +374 77 86-45-95
https://amiobank.am/

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Տվյալ նամակագրությունը կարող է պարունակել գաղտնի տեղեկատվություն: Նախատեսված է միայն ստացողի/ների բացառիկ օգտագործման համար:
Եթե Դուք չեք այս հաղորդագրության հասցեատերը (կամ հասցեատերերը), խնդրում ենք նկատի ունենալ, որ հաղորդագրության կամ դրա պարունակության տարածումը, պատճենումը կամ օգտագործումը խստիվ արգելված է: Խնդրում ենք անհապաղ տեղեկացնել ուղարկողին և ջնջել հաղորդագրությունը

KAREN SARGSYAN
Corporate and SME Business Center |
Corporate Business Analysis and Service chief specialist
TEL: +374 10 59 20 20 (00 297)
MOB: +374 77 86-45-95
https://amiobank.am/

NOTICE
This communication may contain confidential information. It is for the exclusive use of the recipient/s.
If you are not the recipient/s please note that any distribution, copying or use of this communication or the information it contains is strictly prohibited.
If you have received this communication in error, please notify the sender immediately and delete the message